


Մենք հոգեպես մխիթարուած ենք, որ մեր եկեղեցիները, հայ հաւատացեալ ժողովուրդին ծոցին մէջ իրենց ա՛յս առաքելութիւնը ի կատար կ'ածեն, մահաւանդ իմաստուն ու արթուն վերատեսչութեան ու առաջնորդութեան ներքն մեր բարձրաստիճան հոգևոր եղբայրներուն:

Սիրելի Սրբազան, Դուք ևս կը պատկանիք մեր այդ եղբայրներու հոյլին, Ձեր երկարամեայ ուխտապահ ու հոգեշէն գործունէութեամբ, Ձեր մըշտանորոգ բարի եռանդով և անվարան հաւատարմութեամբ Մայր Աթոռիս հանդէպ, գնահատուած և սիրուած տիրախնամ թեմիդ եկեղեցական-ազգային մարմիններու և հաւատացեալ ժողովուրդին կողմէ:

Արդ, Ձեր քահանայական սուրբ ձեռնադրութեան երեսնամեակի լրութիւն, ջերմապէս գնահատելով անցեալ տարիներու Ձերդ Սրբազնութեան եկեղեցականութիւնը, ծառայութիւնները, այլև ընդառաջելով թեմական խորհուրդիդ կրկնակի խնդրանքներուն, սոյն Մեր հայրապետական կոնդակով Ձեզի կը շնորհենք ԱՐՔՈՒԹԵԱՆ պատիւ, աղօթքով արտեռանդ որ Տէրը Ձեզի շնորհէ ևս բազում տարիներ քաջառողջութեամբ, շարունակելու համար Ձեր նուիրական առաքելութիւնը մեր հաւատաւոր ժողովուրդի ծոցին մէջ, Ձեզի յատուկ խանդավառ սրտով և ոգեշնչումով:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա. Կորնթ. ԺԶ 13): Ամէն:



ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21 յունուարի
1980 փրկչական ամի,
և ի տումարիս հաղոց ՌՆԻԹ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 1002

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

1. Հոգեշնորհ տ. Իսահակ ծայրագոյն վաղորդապետ Ղազարյանին
Աղեքսանդրիա-Եգիպտոս: Գնահատանքի և օրհնության կոնդակ՝
ծննդյան 80-ամյակի առթիւ: 11 դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 987:
2. Արժանապատիւ տ. Մովսէս քահանա Ղազարյանին
Ա. Գեղարդա վանք: Քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 10
դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 989:
3. Արժանապատիւ տ. Գորգեն քահանա Մուրադյանին
Ա. Գեղարդա վանք: Քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 14
դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 990:
4. Արժանապատիւ տ. Աթանաս քահանա Մովսիսյանին
Ա. Գեղարդա վանք: Քահանայական լանջախաչ կրելու իրավունք: 12
դեկտեմբեր 1979 թ., ՀՄՐ. 991:

5. Արժանապատիվ տ. Գաբրիել քահանա Կաթապետյանին
Սոֆիա—Բուդապեշտ: Մադկյա փիլոսոֆիկոս իրավունք: 26 դեկտեմբեր
1979 թ., ՀՄԲ, 999:
6. Արժանապատիվ տ. Մեսրոպ քահանա Բենիկյանին
Սոֆիա—Բուդապեշտ: Ավագության աստիճանի շնորհում: 27 դեկտեմբեր
1979 թ., ՀՄԲ, 1,000:
7. Տիար Ստեփան Չոխանյանին
Աղերսանդրիա—Եգիպտոս: Կոնդակ օրհնության՝ կարևոր նվիրատվու-
թյան առթիվ: 12 դեկտեմբեր 1979 թ., ՀՄԲ, 988:
8. Տիկին Մարթա Տիարաբեքյանին
Բուենոս Այրես—Արգենտինա: Կոնդակ օրհնության՝ իբրև բարերարի
«Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս» մանկապարտեզի: 25 դեկտեմբեր
1979 թ., ՀՄԲ, 998:

